«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ
ԱՌԱՐԿԱ	ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ	ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉՈՅԱՆ
ՄԱՐԶ	ԵՐԵՎԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ<<Է. ԹԵԼՄԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն..... 3
1. Ծեսը հանրակրթության բաղկացուցիչ 5
2. Ծիսական երգեր 9
Եզրակացություն 15
Օգտագործված գրականության ցանկ 17

Ներածություն

Ուսումնասիրության արդիականությունը: Տոնը մարդուն (լայն առումով) ուղեկցում է իր կյանքի ողջ ընթացքում, և հենց այդ ժամանակահատվածում էլ ձևավորվում, զարգանում և սովորույթի ուժ է ստանում: Այս առումով մեծ է միջավայրի, հասարակական կարծիքի, տեսանկյան, գործող արժեհամակարգի դերը, որոնց ճշգրտումով էլ միայն հնարավոր է առաջ շարժվել: Բուն տոնն արդեն իսկ ուրախություն է, ցնծություն, դժվարությունը անցնելիք ճանապարհի ճիշտ ընտրությունն է: Քանի որ իմաստային, խորհրդաբանական շերտն էլ բավականաչափ բազմազան է, այս գործին լծվելուց առաջ լավ է ծանոթանալ, ուսումնասիրել, ինքնակրթվել և նոր միայն ազատորեն և անկաշկանդ առաջ գնալ:

Ծեսի մեջ ներառված տարրերից անփոփոխ է միայն բուն խորհրդաբանական շերտը:

Նյութի մեջ նաև ներկայացվաց են ավանդույթների, ծեսերի, ինչպես նաև բանահյուսության դերը երեխայի դաստիարակության մեջ: Ծեսերին, ավանդույթներին ծնողների, ուսուցիչների միջնորդությամբ ու ուղղորդման երեխաների ծանոթացումը, նրանց մասնակցությունը դրանց: Հարկ է նշել, որ երեխաներին անհրաժեշտ է ծանոթացնել ծեսերին և ավանդույթներին, դրանց իրականացմանը նրանց կյանքում: Այս գործընթացի իրականացման մեջ շատ կարևոր է ընտանիքի, ուսուցչական կազմի և ինչու չէ, շրջապատի դերը: Առաջին երկուսը պետք է ոչ միայն կազմակերպեն և բացատրեն երեխաներին դրանց նշանակությունը, այլ երեխայի շրջապտը ևս ներառեն երեխայի իմացական և ծեսերին, ավանդույթներին ծանոթացնելու գործընթացին:

Հեշտ է ենթադրել, որ ազգերի, մարդկության «կյանքիե ընթացքում որոշ ծեսեր մոռացվում են, նորերն են ստեղծվում, եղածները փոփոխվում են՝ անպայման ազդվելով ժամանակաշրջանի կենսափիլիոփայությունից, սոցիալական իրավիճակից, հավատալիքներից, սովորույթներից: Հետևապես՝ ծեսը ժամանակի կրողն է ու ինչ-որ տեղ մարդու գործունեությունը կարգավորող ֆունկցիա ունի:

Թեմայի նպատակը և խնդիրները: Թեմայի նպատակն է ներկայացնել ծիսական երգերի տեղն ու դերը կրտսեր դպրոցում երաժշտության դասավանդման մեջ:

Ելնելով առաջադրված նպատակից ուսումնասիրության են ենթարկվել հետևյալ խնդիրները՝

1. Ժողովրդական երգերի առանձնահատկությունների ուսումնասիրություն
2. ծիսական երաժշտության առանձին տեսակների ներկայացում
3. կրտսեր դպրոցի ուսուցման ծրագրերում ընդգրկված ծիսական երգերի նպատակի և դերի բացահայտում:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը. Աշխատանքում օգտագործվել են պատմահամեմատական, պատմավերլուծական քննության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել արծարծված խնդիրները մեկ ամբողջական համակարգում:

1. Ծեսը հանրակրթության բաղկացուցիչ

Ուսումնական գործընթացի ցանկացած խնդրի լուծում կարելի է իրագործել ծեսի իրականացման ընթացքում, որովհետև այն մարդու կյանքի մի մասն է, դրա տարբեր կողմերի արտացոլումը՝ իր եփ ու թափով, հաց ու կապով, հոգս ու հաշվարկով, երգ ու պարով, տոնով ու տաղավարով:

Կարևոր աշխատանք է ծեսի մասին տեղեկատվության հավաքումը: Համեմատաբար փոքրերը կարող են մանկական բանահավաքություն կատարել. մեծերից օրհնանքներ, խաղիկներ, հաշվերգեր, ասույթներ սովորել, եթե կարող են, նաև՝ գրի առնել, պարզել, թե ինչ սովորույթներ են եղել, որոնք են պահպանվել, դասարանում ներկայացնել դրանք:

Ծեսի ուսումնասիրման հետ կապված՝ սովորողներին հիմնականում հետաքրքրում են՝

- այս կամ այն ծեսի հեթանոսական շերտերը.
- այս կամ այն ծեսի քրիստոնեական շերտերը.
- այս կամ այն ծեսը ինչպես են նշում այլ ժողովուրդները:

Սովորողները ուսուցիչների հետ տարբեր աղբյուներից տեղեկություն են հավաքում մոտեցող ծեսի, նրա խորհրդի, պարագաների, սովորույթների, ծեսի հետ կապված իրական և դիցաբանական կերպարների մասին, ավանդություններ և բանահյուսական այլ նյութեր գտնում, կարող են բանահավաքչությամբ զբաղվել և այլն:

Ուսումնասիրում են այլ ազգերի համանման ծեսերը: Այս ընթացքում նրանք՝

- օգտվում են համացանցից /ինտերնետից/,
- թարգմանություններ են կատարում,
- կարդում են համապատասխան գրականություն,
- աշխատում մեծահասակների հետ:

Կարող են մեծահասակներից տեղեկանալ և գրի առնել, թե նրանք ինչպես են իրականացրել ծեսը, մեր օրերում նշվող ծեսը համեմատել նրանց պատմածների, նախորդ դարերի նկարագրությունների հետ, համեմատություններ կատարել, եզրակացություններ անել, զարգացնել ծեսը՝ ժամանակակից տարրեր ներմուծելով:

Ծեսի, նրա տարրերի, նրանում արտացոլված հավատալիքների մասին էլեկտրոնային տեղեկատվական նյութ են պատրաստում: Փոքրիկ հետազոտական նախագծեր են իրականացնում: Այդ ընթացքում նաև ծեսի էությունն են յուրացնում: Հասկանալով ծեսի էությունը՝ դժվար չէ ժամանակակից մարդու կյանքում ևս գտնել ծեսեր, որոնք մենք որպես այդպիսին գուցե չենք էլ ընկալում: Այդպիսիք դժվար չէ գտնել նաև դպրոցական կյանքում, ու սովորողները ուսուցիչների հետ կարող են իրենց գործունեության որոշ ձևեր մշակված ծեսի վերածել, ասենք՝ գարնանային աշխատանքները, ուսումնական որոշ նյութերի ուսումնասիրությունը, դպրոցական որոշ ավանդույթներ՝ ուսումնական տարվա սկիզբ, ավարտ, վերջին զանգ, մեր օրերում ձևավորված տոներ…

Նրանք ոչ միայն հետազոտական, ստեղծական աշխատանք են կատարում, այլև դառնում են իրենց գործունեության նախագծողն ու իրականացնողը: Միաժամանակ ինքնուրույն որոշումներ կայացնող և դրանք իրականացնող, պատասխանատու մարդ է ձևավորվում:

Ժամակարգություն, ծեսի ևաստվածապաշտության բաղկացուցիչ հիմնական բաժիններից, հանապազօրյա պաշտոներգություն ըստ եկեղեցական օրվա տարբեր աղոթաժամերի: Ժամերգություն նշանակում է ժամ երգել, այսինքն՝ օրվա որոշ ժամերին կարգավորված (ժամակարգված) եկեղեցական արարողություն կամ պաշտամունք կատարել: Ժողվրդական լեզվով «ժամե նշանակում է նաև եկեղեցի, այստեղից էլ՝ ժամ գնալ (ծիսական արարողությանը մասնակցել, ներկա գտնվել) արտահայտությունը, ժամվոր (Ժամերգությանը ներկա գտնվող հավատացյալները), ժամկոչ(եկեղեցու կոչնակը կամ զանգը հնչեցնող և հավատացյալներին արարողության հրավիրող), ժամատուն բառերը[1]:

Ժամերգությունների կարգավորությունը և դրանց հատուկ երգեցողությունները (աղոթքներ, քարոզներ, հոգևոր երգեր, բացառությամբ՝ շարականների) պարունակող գիրքը կոչվում է Ժամագիրք: Ժամերգությունները կազմված են Տերունական աղոթքից, սաղմոսից, մաղթանքից, քարոզից, աղոթքից, շարականից: Ժամերգության ժամանակ այս շարքը լրիվ կամ մասնակի ձևով երբեմն կրկնվում է մի քանի անգամ:

[1] Սիմոնյան Լ. “Տոմարային ծիսաշար” Երեւան 2006, էջ 24

Հայ միջնադարյան մատենագրության մեջ կենցաղավարել են Ժամերգության կամժամակարգության մեկնություններ, որտեղ տրված են Ժամերգությունների աստվածաբանական բացատրությունները: Մեկնություններ են գրել Ստեփանոս Սյունեցին, Հովհաննես Գ Օձնեցին, Խոսրով Անձևացին, Մովսես Երզնկացին, իսկ Ժամագրքի երգեցողությունների հարստացման գործում մեծ է հատկապես Ներսես Շնորհալու ավանդը:

Հայոց մեջ տարբեր դարերում և միջավայրերում Ժամերգությունները տարբեր թվաքանակ են ունեցել՝ 6, 7, 8, ի վերջո ընդունվել է 9 ժամերգություն: Գլխավոր Ժամերգությունները յոթն են՝ համաձայն սաղմոսերգուի՝ «Օրվա մեջ յոթն անգամ քեզ պիտի օրհնեմե (Սաղմ. 118. 164) խոսքերի, իսկ ըստ կանոնակարգի՝ ինը, քանի որ Ճաշու Ժ. իր հերթին բաժանվում է երեք մասի: Համաձայն Ժամագրքի՝ Հայ եկեղեցին ունի հետևյալ Ժամերգությունները.

1. Գիշերային Ժամերգություն, նվիրված է Հայր Աստծո փառաբանությանը: Կատարման ժամանակը կես գիշերն է: Ունի հետևյալ իմաստը. քունը Աստծո կողմից շնորհված բարիք է. շնորհակալություն և գոհություն Աստծուն այդ բարիքի համար:

Խնդրանք առ Աստված, որ գիշերվա շարունակությունն անցնի խաղաղ, իսկ հաջորդ օրը՝ առանց մեղքի և փորձության:

2. Առավոտյան Ժամերգություն, նվիրված է Որդի Աստծո փառաբանությանը: Կատարվում է արշալույսին: Խորհրդանշում է Քրիստոսի երևալը Յուղաբեր կանանց՝ ամփոփելով Քրիստոսի Հարության և Փրկագործության խորհուրդները:

3. Արևագալի Ժամերգություն, նվիրված է Սուրբ Հոգուն: Նախկինում եղել է Առավոտյան Ժամերգության մի մասը: Խորհրդանշում է Քրիստոսի Հարությունը և աշակերտներին երևալը: Հաստատել է Եզր Ա Փառաժնակերտցին, ճոխացվել է XII դ. Ներսես Շնորհալու գրած երգերով Կատարվում է արևածագին՝ Քրիստոսի Հարությունը նույնացնելով արևի ծագմանը:

4. Ճաշու Գ ժամի ժամերգություն, ուղղված է Սուրբ Հոգուն: Խորհրդանշում է արգելված պտղից Եվայի ճաշակումը և Քրիստոսով դատապարտումից ազատվելը[2]:

[2] Սիմոնյան Լ. “Տոմարային ծիսաշար” Երեւան 2006, էջ 36

Նաև հիշատակումն է Քրիստոսի չարչարանքի: Կատարվում է ժամը 9-ին: Ապաշխարության խորհուրդ պարունակող մի արարողություն է:

5. Ճաշու Զ ժամի Ժամերգություն, ուղղված է Հայր Աստծուն: Խորհրդանշումն ու հիշատակումն է Քրիստոսի չարչարանքների ու խաչելության: Կատարվում է ժամը 12-ին: Այս Ժամերգությամբ հավատացյալը Աստծուց խնդրում է օգնություն իր մարդկային տկար բնության համար:

6. Ճաշու Թ ժամի Ժամերգություն, ուղղված է Որդի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի մահը, որով և՝ մարդկության ազատումը դժոխքի իշխանությունից: Կատարվում է ժամը 15-ին:

7. Երեկոյան Ժամերգություն, ուղղված է Որդի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի թաղումը: Կատարվում է մայրամուտից առաջ: Գիշերվա սեմին հավատացյալը, աշխատանքից հոգնած և օրվա հոգեկան ալեկոծությունից հետո, խնդրում է Աստծուն, որ իրեն պարգևի խաղաղ գիշեր և բարի քուն:

8. Խաղաղական Ժամերգություն, ուղղված է Հոգի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի դժոխք իջնելը և արդարների տանջանքների դադարեցումը: Կատարվում է մայրամուտից հետո: Նպատակն է անդորրություն և խաղաղություն բերել ամենօրյա մեղքերով ծանրաբեռնված մարդու հոգուն:

9. Հանգստյան Ժամերգությունը, ուղղված է Հայր Աստծուն: Նախկինում այս Ժամերգությունը նախորդի շարունակությունն էր և առանձին խորհուրդ չունի: Կատարվում է քնելուց առաջ: Նախկինում, հատկապես վանքերում, 9 Ժամերգությունները կատարվել են ամեն օր, ճիշտ իրենց ժամին:

Ներկայումս ամեն օր կատարվում են Գիշերային և Առավոտյան Ժամերգությունները միասին՝ առավոտյան, և Երեկոյան Ժամերգություն՝ երեկոյան: Մեծ պահքի օրերին, բացի շաբաթ-կիրակի օրերից, կատարվում են նաև մյուս Ժամերգությունները՝ ըստ հետևյալ կարգի. Գիշերային, Առավոտյան, Արևագալի՝ առավոտյան, Ճաշու 3 և Երեկոյան՝ կեսօրին, Խաղաղականը՝ երեկոյան (երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի օրերին), Հանգստյանը՝ երեկոյան (չորեքշաբթի և ուրբաթ օրերին):

2. Ծիսական երգեր

Ծես, աստվածապաշտություն, խորհրդաբանական գործողություն կամ գործողությունների, արարողությունների շարք՝ արտահայտելու համար որևէ նվիրական, աստվածային երևույթ. հոգևոր պաշտամունքի ձև: Բազմաթիվ Ծեսեր և ծիսական արարողություններ են նկարագրված Հին կտակարանի գրքերում, ինչպիսիք են՝ օծման Ծես, զոհաբերության Ծես, զատկական Ծես և այլն:

Ծեսը նկարագրված է նաև Նոր կտակարանում: Հիսուսն ինքը իրառաքյալների հետ կատարում էրսաղմոսասացություն, օրհներգություն, այսինքն՝ պաշտամունք առ Հայր Աստված նա ժողովարան գնաց և ընթերցեց Եսայի մարգարեի գիրքը (Ղուկ. 4.16–21), կատարեց Հին ուխտով սահմանված Զատիկը (Պասեք), որի ընթացքում, հաց և գինի բաժանելով աշակերտներին, իբրև տերունական մարմնի և արյան խորհուրդ, հորդորեց այն կատարել այնուհետև իր հիշատակի համար. դրանով իսկ հաստատվեց ս. Հաղորդության Ծեսը կամս. Պատարագը (Մատթ. 26.17–30, Մարկ. 14.12–25, Ղուկ. 22.7–20, Հովհ. 13.21–30, Ա Կորնթ. 11.23–26): Ծեսը պահպանվել է նաև առաքելական շրջանում. «… և նրանք հարատևում էին առաքյալների ուսուցման, հաղորդության, հացի բեկման ու աղոթքների մեջ» (Գործք 2.42, տես նաև Գործք 2.46, 20.7, 11, 27.35):

Եկեղեցիների կազմավորման և ճյուղավորման շրջանում յուրաքանչյուր եկեղեցի, պահելով հինկտակարանային և առաքելական շրջանից ավանդված էական Ծեսերը, միաժամանակ նոր հավելումներ է արել՝ պատշաճեցնելով դրանք հիմնական Ծեսերին: Առաջ են եկել հունական, հայկական, ասորական, լատինական, ղպտական եկեղեցական Ծեսեր և իրենց հերթին՝ դրանց այլ ճյուղավորումներ:

Հայ եկեղեցական Ծեսը սկզբնական շրջանում կատարվել է ըստ հունական և ասորական առաքելական ավանդությունների: Գրիգոր Լուսավորչից սկսած, ապա, մասնավորաբար V դարից՝ հայոց գրերի գյուտից և Աստվածաշունչը հայերեն թարգմանելուց հետո, ընդհանրական Ծեսը, հայացվելով, դարձել է առավել ազգային, օժտվել նոր հավելումներով ու պատշաճեցումներով: Ծեսի բովանդակային առանցքը կազմող շարականների, աղոթքների խմբագրման և հատուկ

դասավորության առումով մեծ դեր են կատարել Սահակ Ա Պարթև կաթողիկոսը, Մեսրոպ Մաշտոցը և Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսը):

Հայ եկեղեցու Ծեսը հարստացել է նաև հետագայում, մասնավորապես VIII, IX, XII դդ.՝ Ստեփանոս Սյունեցու, Հովհաննես Գ Օձնեցու, Խոսրով Անձևացու, իսկ կիլիկյան շրջանում՝ Ներսես Շնորհալու և Ներսես Լամբրոնացու բարենորոգչական ներդրումներով:

Ծեսի կամ աստվածապաշտության արարողակարգի հիմնական բաղկացուցիչ մասերն են խորհուրդները, ժամերգությունները, տոները և հոգևոր բարեպաշտական արարողությունները:

Ծես նշանակում է կարգ: Կարգը կամ ծեսը սահմանվում է իր իսկ հասարակության կողմից՝ համակեցության օրենքները կանոնավորելու համար: Ծիսական երգերը դասակարգվում է երեք խմբում.

ա/Հարսանեկան երգեր:

բ/ Ողբեր կամ մահերգեր

գ/ Տարբեր ծեսերի և տոնակատարությունների երգեր

Ա. Հարսանեկան երգեր[3]

Հարսանեկան են կոչվում այն բոլոր երգերը, որոնք կատարվում են հարսանիքների ժամանակ: Հանդեսը հաճախ ներկայացվել է մի թատերականացված արարողություն, որտեղ տեղ են գտել զանազան տիպի խաղեր: Նահապետական ընտանիքի գոյության պայմաններում ամուսնությունը գյուղի հասարակական կյանքի կարևորագույն իրադարձություններից մեկն էր: Հարսանիքները տեղի են ունեցել հիմնականում աշնանը, երբ ավարտված էր բերքահավաքը: Ամուսնության հաջողության համար նշանակություն է ունեցել կրոնական նույն դավանանքին, միևնույն ազգին պատկանելու պայմանը: Աղջկա ընտրությունը կատարել են տղայի ծնողները, գնացել են խնամախոսության, կամ տղայի մայրը եկեղեցում իր ընտրած աղջկան մոմ է տվել, թաշկինակ-քող գցել նրա գլխին:

[3] Գյոդակյան Գ. , Էջեր հայ երաժշտության պատմությունից, Երևան, 2009, էջ 87

Հարսանեկան երգերը իրենց բազմազանությամբ և յուրօրինակությամբ դրսևորել են ժողովրդի հասարակական և ընտանեկան կենցաղը, տալիս է հարուստ նյութ նահապետական ընտանիքի բարքերն ու սովորույթները ուսումնասիրելու համար: Նրանք միաժամանակ ստեղծում են հետաքրքիր տեսարաններ, ինչպես Կոմիտասն է արտահայտվում, շքեղ գեղարվեստական, բանաստեղծական ներկայացումներ:

օրինակ՝ Թագվորի մեր դուրս արի,
Տես քե ինչեր ենք բերել,
Թագվորի մեր դուրս արի
Քե ջուր բերող ենք բերել:

Մեր Թագվորն է խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Պսակն էր կարմիր,
Արևն էր կանաչ:

Օրինյալ, բարերար Աստված,
Կամքն օրինյալ մեր Արարողին,
Զուգեցինք, հայ, թամամեցինք,
Զխաչեն ի վրեն բազմեցուցինք:

Ողբեր կամ մահերգեր

Ողբերը կամ մահերգերը ծիսական երգերի տարատեսակն են: կոչվում են նաև ,,ձայնարկուք'': Ողբերն իրենց բնույթով իմպրովիզացիոն-պատմողական են, ինքնամփոփ ու ինքնապարփակ: Նրանց պատմողականությունը նկատի ունենալով Աբեղյանը գտնում է, որ ողբասացների զրույցները վեպի սկզբնական աղբյուրներն են եղել:

Տարբեր ծեսերի ու տոնակատարությունների երգեր

Տարբեր ծեսերի ու տոնակատարությունների երգերը պատկերում են կենցաղի մեջ արմատավորված զանազան արարողությունները, սովորույթները, սովորույթները, նկարագրում ամբողջ տոնակատարությունները և այլն: Տոնակատարություններից հատկապես ճոխ են եղել և բոլորին մեծ զվարճություն

պատճառել Համբարձումն ու Վարդավառը, կամ ջրի, ծառի ու ծաղկի պաշտամունքի տոները:

Համբարձման տոնը թեպետ կատարվում է Քրիստոսի համբարձման օրը /որի մասին կան հիշատակություններ ժողովրդական խաղիկներում /, բայց պետք է ենթադրել, որ այն գոյություն է ունեցել նախաքրիստոնեական շրջանում: Ըստ ժողովրդական հավատալիքների, Համբարձման գիշերը իբրև թե բոլոր բույսերը իրար հետ զրուցում են, ջրերը րոպեական կանգ են առնում, գերբնական զորություն ստանում, եթե այդ ջրի մեջ որևե առարկա գցեն ու ցանկություն հայտնեն՝ ոսկի կդառնա, բուժիչ հատկություն կունենա և այլն[4]:

Ժողովրդական վոկալ, գործիքային և ոկալ-գործիքային կոլեկտիվ ստեղծագործություն, որը կենցաղավարում է բանավոր կերպով, փոխանցվում կատարողական ավանդույթների շնորհիվ: Ընդհանուր ֆոլկլորի մասն է, ամբողջական երաժշտական մշակույթի մի ճյուղը, ըստ էության՝արմատը, արտացոլում է ժողովրդի կյանքը, նրա աշխարահայացքը: Ժողովրդական երաժշտության բնորոշ գծերն են՝ ավանդականությունը /վերաբերվում է ոչ միայն գեղարվեստական ձևին, այլ ֆունկցիոնալ կիրառությանը, կատարման կերպին/, բանաստեղծական ու երաժշտական լեզվի ազգային ցայտունությունը: Ժողովրդական երաժշտության ակունքները նախապատմական անցյալի մեջ են: Ժամանակի ընթացքում տեղի է ունենում նրա արտահայտամիջոցների, տեսակների ու ձևերի նորացում:

Գեղարվեստական ձևակերպված ժողովրդական երաժշտության հիմքը գեղջկական ֆոլկլորն է ու հասել է բարձրագույն կատարելիության: Ժողովրդական երաժշտության տեսության ու պատմության միմյանց հետ սերտ կապակցված ուսումնասիրությունը ընդգրկվում է ֆոլկլորագիտության, ինչպես և ընդհանուր երաժշտագիտության ու ազգագրության մեջ: Տեսական ուսումնասիրության նյութը հավաքված և ձայնագրված բուն ժողովրդական երաժշտությունն է, որ դիտվում է ըստ այն կազմող բաժինների /բուն երաժշտություն, ֆոլկլոր և ժողովրդապրոֆեսիոնալ բանավոր արվեստ, որի կրողներից են՝ գուսանը, ժանգյորը, մենեստրելը, աշուղը, ակինը, բախշին, խանեդեն և այլն /ըստ

[4] Բրուտյան Ա.,Ռամկական մրմունջներ, թիվ 30, 140-141

կենցաղավարման միջավայրի/ գյուղական և քաղաքային ժողովրդական երաժշտության /ըստ տարակազմության/ մաքուր երաժշտություն և սինկրետիկ արվեստի ստեղծագործություն:

Առանձին ուսումնասիրության առարկա են դառնում մելոսի տիպերը /ծորուն, երգային, օրինակ՝ քնարական երգերը՝ համաչափ շարժումնային, պարերգերը՝ արտասանական ոճի եղանակ, ողբերգերը՝ ասերգ կամ մեղեդիացված արտասանություն, վիպական՝ պատումների երաժշտական հատվածները: Ժողովրդական երաժշտության զարգացման վաղեմի շրջաններին բնորոշ են վիպական և ծիսական ֆոլկլորի հնագույն տեսակները, ֆեոդալական միջնադարն /համարվում է ժողովրդական երաժշտության դասական շրջան/, քնարական ժանրերի ծաղկումը՝հաջորդող դարաշրջանին: Ժանրային կազմի խիստ նորացում, պրոֆեսիոնալ երաժշտության ազդեցություն, քաղաքային ֆոլկլորի առանձնացում և այլն: Որպես կանոն, որևէ ժողովրդի երաժշտաարտահայտչական միջոցների համակարգը գոյացել ու զարգացել է նրա ազգային խոսակցական լեզվի ձևավորման ու զարգացմանը զուգահեռ՝ սկիզբ առնելով պարզագույն լադերից, ամորֆ ռիթմերից, նախնական ելևէջներից, տվյալ ժողովրդի կյանքին ու կենցաղին յուրահատուկ ժանրերից ու ձևերից: Ամեն մի ազգի ժողովրդական մշակույթ ներառնելով մի շարք երաժշտական ,,բառբառներ'' միավորում է ավելի մեծ ֆոլկլորային ազգագրական ընդհանրություններում: Այսպես, օրինակ, մահմեդական Արևելքի ժողովրդական պրոֆեսիոնալ երաժշտությունը /մուղամաթ, մակոմաթ, մակամաթ/ մշակել է իր տեսական համակարգը, որը տարբեր է առանձին ժողովուրդների համար, բայց ունի ընդհանուր սկզբունքներ: Ժամանակակից համեմատական ֆոլկլորագիտության մեջ փորձեր են արվում սահմանելու աշխարհի ժողովրդական երաժշտության երաժշտա-ոճական տեսակետից ռեգիոնալ դասակարգում:

Հայ ժողովրդի երաժշտությունը նրա բազմահարուստ ֆոլկլորի մի նշանակալից բաժինն է, խորապես ավանդական է, ունի ազգային յուրահատուկ հնչեղություն, առանձնանում է նուրբ կերտվածքով, առայսօր մեծ տեղ է գրավում ժողովրդի կյանքում: Հազարամյակների հասնող նրա հնությունը հաստատում են ժայռապատկերներն ու հնագիտական գտածոները, հնագույն պատմագրական

աշխատություններն ու միջնադարյան մանրանկարչությունը և ամենից կարևորը՝բուն երգերը, որոնք մեր օրերն են հասցրել նույնիսկ հեթանոսական մշակույթի տարրեր: Այդ արվեստը բազմաճյուղ է / գյուղական, քաղաքային, աշուղական, հոգևոր-ժողովրդական և այլն/ ունի արտահայտչամիջոցների հարուստ զինանոց, որի օգնությամբ բարձրարվեստ մեղեդիներում և նախասիրված բանաստեղծական կերպարներում մարմնավորվել է ժողովրդի ,,վիշտն առանց հուսահատության, խանդն առանց մոլագարության և հիցմունքն առանց անզսպության''/ ընդգծել է Վալերի Բրյուսովը:

Մեծ է եղել ժողովրդական երաժշտության տեղն ու դերը ժողովուրդների կենցազում և պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի ստեղծման ու զարգացման բնագավառում: Այն ներկայումս էլ բեղմնավորում է կոմպոզիտորական երաժշտությունը և գեղարվեստական ինքնագործունեությունը:

Եզրակացություն

Ծեսերին, ավանդույթին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան:

Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հիբրիդ՝ հնի ու նորի վատ խառնուրդ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել նաև ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր:

Մեր նպատակն է ծեսը, տոնը սովորողին հասցնել իր իսկ միջոցով, իր մասնակցությամբ, որպեսզի վերջնական արդյունքն էլ լինի բոլորի համար յուրացված, ցանկալի, սպասված և մնայուն:

Ծեսերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո որոշում ենք, թե ինչ ճանապարհ են անցնելու երեխաները ծիսակատարությանը նախապատրաստվելիս:

- Ծանոթանում են ծեսի բովանդակությանը
- Նկարում են ծիսական հերոսներին, ծիսական պատկերներ, պատրաստում են ծիսական պարագաներ:
- Սովորում են ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, ասիկներ, օրհնանքներ, բեմականացնում են դրանք:
- Սովորում են ավանդական պարեր, խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր:

Երեխան, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը, արդյունքում տեղի է ունենում նոր գիտելիքի յուրացում, խոսքային հմտությունների զարգացում, գիտելիքների, կարողությունների դրսևորում և կիրառում, ճաշակի զարգացում, ինքնադրսևորում

Գործում են ընտանիք - դպրոց կապը, որոնք նպաստում են ծեսը, տոնը բոլոր տեսանկյուններից յուրացնելու և որպես մեկ ամբողջություն ընկալելու:

Աշակերտները ընկալում են, որ ծիսական երգը ստեղծել է ժողովուրդը՝ որպես իր զգացմունների և մտքերի, բնավորության և կենցաղի արտահայտություն, ինչպես նաև հայրենի բնաշխարհի նկարագրություն և գովք: Երեխաները սովորում են նաև, որ Իմ ժողովրդի երաժշտություն հասկացության մեջ մտնում է ոչ միայն ժողովրդական, այլ նաև կոմպոզիտորների ստեղծած երաժշտությունը, որ այդ երկուսը միասին կազմում են այն հարստությունը, որը կոչվում է հայ ազգային երաժշտություն: Չորրորդ դասարանի հաջորդ թեման կոչվում է <<Երաժշտությունը սահման չի ճանաչում>>: Երեխաներն իմանում են, որ ինչպես հայ, այնպես էլ ուրիշ ազգերի կոմպոզիտորներ իրենք ստեղծագործություններում կիրառում են այլ ժողովուրդների երաժշտություն՝ որոշակի կերպար կամ պատկեր ստեղծելու նպատակով, որը վկայում է համամարդկային արժեք ներակայցնող՝ տարբեր ժողովուրդների երաժշտարվեստի նկատմամբ եղած հետաքրքության և անկնածալի վերաբերմունքի մասին: Բացատրելով աշակերտներին, որ երաժշտական լեզուն համամարդկային է, բոլորին հասկնալի, և որ հայ երաժշտությունն այդ արժեքների մասն է կազմում, կկարողանանք նրանց մեջ հարգալից և բարիացակամ վերաբերմունք ձևավորել հայ և աշխարհի մյուս ժողովուրդների և նրանց երաժշտական մշակույթի հանդեպ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բրուտյան Ա.,Ռամկական մրմունջներ, թիվ 30, 140-141
2. Բրուտյան Մ.,Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան, 1971, II հրատ.՝ 1983, III հրատ՝ 2004:
3. Գյոդակյան Գ. , Էջեր հայ երաժշտության պատմությունից, Երևան, 2009
4. Մանասյան Գ. «Խորհրդանշանների հանրագիտարան» Երեւան, 2007,
5. Սիմոնյան Լ. “Տոմարային ծիսաշար” Երեւան 2006